


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆԱԳՐԻ ՎԱՃԱՐԿԵՐԸ¹
ԵՎ ՌԱՐԱՅԻՆ ՀԵՂԱՎԿԱՐՆԵՐԸ²

ARMENIAN STUDIES TODAY
AND DEVELOPMENT
PERSPECTIVES

Միջազգային համաժողով
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.
International Congress
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու
Collection of papers



**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՈՐ ԻՆՔՍՈՒՍՈՒՅՑԻ
ՍՏԵՂՋՄԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱԾԱԿԱՆ
ՐԱՍՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Սամվել Իսկանդարյան
Գրիգոր Վահանյան
Դայաստան**

Լեզուն բոլոր ժամանակներում եղել և մնում է ազգի գլխավոր ցուցիչը և անսխալական արտահայտիչը: «Ներկայիս ժամանակում,- գրել է Մեսրոպ Թաղիառյանը,- մեր ազգության ապացույց և նշանն միայն մեր լեզուն է, եթե այն ևս միջիցն բառնանք, էլ հայ չենք»: Նույնն է վկայում նաև մեր մեծ լուսավորիչ Խաչատուր Աբրովյանը. «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն առ հավատը: Լեզուի փոխիր, հավատող ուրացիր, էլ ընչո՞վ կարեն ասիլ, թե որ ազգիցն ես»:

Այսօր, թերևս, ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ինչպես Մայր Դայրենիքում, այնպես էլ մանավանդ Սփյուռքում բավական մեծ թիվ են կազմում մեր այն հայրենակիցները, ովքեր ճակատագրի թերմանք անհաղորդ են մնացել իրենց նախնյաց լեզվին, որը ոչ միայն ոգի է, այլև ազգային ոգու և փորձի փոխանցման միջոց: Դայկական տարերքից կտրված այդ մարդկանց համար, որքան էլ ցավալի է և տարօրինակ, հայերենը օտար լեզու է, ինչպես մեզ համար՝ անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և մյուս լեզուները: Բայց հայերեն չիմանալը հայի մեղքը չէ, այլ դժբախտությունը: Ուստի կարծում ենք՝ մեղադրելուց ավելի կարևոր և մարդասիրական կլինի այն, որ օգնենք մեր քույրերին ու եղբայրներին, գոնե ցանկացողներին, վերադառնալ մայր ժողովրդի գիրկը:

Մյուս կողմից Շայաստանի Շանրապետության անկախության հոչակումից հետո, երբ մեր երկիրը ներգրավվել է համաշխարհային գործընթացների մեջ, անդամ դարձել միջազգային մի շարք կառույցների, գնալով մեծանում է հետաքրքրությունը հայերիս ու մեր երկրի նկատմամբ, և շատ օտարերկրացիներ ևս ցանկանում են հայերեն սովորել, մեզ հետ հաղորդակցվել մեր լեզվով:

Բայց ի՞նչ ունենք մենք տրամադրելու ինչպես հայերեն չիմացող մեր հայրենակիցներին, այնպես էլ մեր լեզվին տիրապետել ցանկացող մեր օտարերկրացի բարեկամներին, բացի մի քանի քերականագիտական ծեռնարկներից և ինքնուսույցներից, որոնց արժանին հատուցելով՝ այնուամենայնիվ ստիպված ենք նկատել, որ լեզուների արագացված ուսուցման դարաշրջանում դրանք վաղուց իրենց սպառել են: Շայագիտական առաջին միջազգային համաժողովի բացման նիստի ժամանակ դոկտոր Ռիչարդ Շովիաննիսյանն իրավացիորեն նկատեց. «Վերջին տարիների տեխնոլոգիական հեղափոխությունը անթիվ նորարարությունների հեռանկարներ է բացել... Տեխնոլոգիան այժմ կարող է պատասխանել երևակայության բոլոր թորիքներին», մինչդեռ «մենք ետ ենք մնում բազում ասպարեզներում»: Խոսքը մասնավորեցնելով հայոց լեզվի ուսուցման վերաբերյալ՝ հարգարժան գիտնական իր

գեկուցման մեջ նկատում է. «Ժամանակակից արևելահայերենի և արևմտահայերենի ուսուցման ու ուսուցման օժանդակելուն չեն բավարարում արդյունավետ տեսալսողական միջոցներն ու անհրաժեշտ լարորատոր նյութերը»:

Ահա հայերենը որպես օտար լեզու ուսուցմանելու բնագավառում եղած բացը լրացնելուն է կոչված հայոց լեզվի մեր էլեկտրոնային նոր ինքնուսույցը, որը հայերականության մեջ նորություն է ոչ միայն լեզվի ուսուցման մեթոդի, այլև նորագույն տեխնոլոգիաների կիրառման առումով: Ստեղծագործաբար օգտագործելով այս բնագավառում ուսուական լեզվաբանների առաջավոր փորձը՝ մենք այդ փորձը հարստացրել ենք նաև մեր դիտարկումներով և ուսումնասիրություններով, սիյութքահայ ուսանողների հետ տարիների աշխատանքի մեր փորձով:

Սա լազերային սկավառակի վրա գրանցված եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) էլեկտրոնային դասագիրք է, որի հայերեն տեքստերը նաև հնչում են: Այս ինքնուսույցի միջոցով անգլիախոս կամ ռուսախոս յուրաքանչյուր ոք, լինի հայերեն չիմացող հայ կամ օտարերկրացի, կարող է կարճ ժամանակամիջոցում յուրացնել մոտ 2000 բառ և տիրապետել լեզվական այնպիսի հմտությունների, որոնք նրան հնարավորություն կտան միջին մակարդակով ազատ հաղորդակցվել հայկական միջավայրում:

Լեզվի ուսուցման մեր մեթոդի հիմքում ընկած է խաղը՝ որպես դարերով փորձված միջոց: Դրա ելույնն այն է, որ ուսուցման նպատակը թաքնված է սովորողից: Դիտողական և խոսքային միջոցների օգնությամբ ստեղծվում է բնականին նոտ միջավայրի պատկեր, և սովորողին քվում է, թե ինքը ոչ թե լեզու է սովորում, ոչ թե քերականական կատեգորիա կամ խոսքային միավոր է յուրացնում, այլ առօրյա կյանքում հանդիպող խնդիր է լուծում կամ առաջադրանք կատարում: Այստեղ չկան քերականական բացատրություններ, այլ ամբողջ քերականությունն ուսուցանվում է գործնական վարժությունների միջոցով, որոնք բնույթով հաղորդակցական լինելով միաժամանակ թեմատիկ և իրադրական ուղղվածություն ունեն:

Արհասարակ վարժությունների հարցը մերորդկայի հիմնահարցերից է: Դրանց համակարգի ճիշտ ընտրությունը շատ բանով է պայմանավորում լեզվի ուսուցման արդյունավետությունը: Այս առումով իրոք անփոխարինելի է նմանողական վարժությունների դերը: Ժալտերի կարծիքով՝ վերջիններս փոխարինում են ավանդական քերականական բացատրություններին նպաստելով լեզվական կառուցվածքի յուրացմանը: Իսկ Ռ. Լամբաուն նմանողական վարժությունները համարում է բոլոր վարժությունների մեջ ամենահիմնականը և ամենակարևորը:

Շեշտը դնելով նմանողական վարժությունների վրա՝ մենք լիովին բացառել ենք քերականական բացատրությունները, ընդունակ մինչև օտար լեզուների ինքնուսույցներում (Մոժիե-Բրաուլզերի ֆունսերեն, թեսլեր-Լևինի գերմաներեն, Դիբունի անգլերեն, Կոստոմարովի խմբագրությամբ՝ ռուսերեն) պահպանված խոնարհման և հոլովական աշյուսակների դուրս մղումը: Մեր կարծիքով, որանք ավելի շուտ ընթերցողական վարժություններ են, քան միտված են լեզվի գործնական ուսուցմանը: Կանակ հարցի մյուս կողմը. հաճախ է պատահում, որ սկսնակը անգիր անելով սերտում է հոլովական կամ խոնարհման աշյուսակը, բայց լրիվ անճարակ է դառնում, երբ այս կամ այն քերականական կարգն ստիպված է լինում կիրառել առօրյա կյանքում հանդիպող որոշակի հրադրության մեջ: Ուստի առավել նպատակահարմար է խոնարհումը և հոլովումը ուսուցանել ոչ թե առանձին-առանձին, այլ կենդանի խոսքում հարցութափախանային վարժությունների միջոցով: Իրավացի են այն մերուդիմները, ովքեր մերժում են «Խոնարհել հետևյալ բայերը», «Գոյականը նախադասության մեջ օգտագործել այս կամ այն հոլովով» և նման տիպի վարժությունները, որոնք մեխանիկական բնույթ ունենալով, ոչինչ չեն տալիս լեզվի գործնա-

կան ուսուցմանը: Այս դեպքում փոխվում է նաև վարժության պահանջը, օրինակ «Համաձայնվեցնք կամ մի համաձայնվեցք ինձ հետ», «Տրված հարցերին տվեք դրական կամ բացասական պատասխան», «Արմենը կարդո՞ւմ է, թե՝ գրում» և այլն:

Առավել արդյունավետ են այն վարժությունները, որոնք սովորողից ստեղծագործական նոտեցում են պահանջում, նրան մոտեցնում իրական հաղորդակցության պայմաններին և մղում ստեղծագործաբար արտահայտելու իր մտքերը: Օրինակ այս կարգի վարժությունը. «Դուք եկել եք խանութ: Կաճառողից խնդիր՝ ք ցուց տալ Ձեր ուզած ապրանքը կամ նթերքը: Դարցը՝ ք գինը: Գնեցե՛ք Ձեր ուզածը»:

Ինչ վերաբերում է հարցութափախանային վարժություններին, մեթոդիստները բողոքում են, որ օտար լեզուների ուսուցման ծեռնարկներում ու դասագրքերում հիմնական ուշադրությունը դարձվում է պատասխանելու կարողության մշակմանը և գրեթե անտեսվում է հարց տալու հնտության ձևավորման ու զարգացման վրա տարվող աշխատանքը: Մենք ձգտել ենք վարժությունների համակարգում պահպանել համաշափությունը: Եվ առհասարակ այս ինքնուսույցում չկան պատահական վարժություններ: Ամեն մի վարժությունը կազմելիս՝ միշտ աչքի առաջ ենք լինեցել դրա նպատակը: Հասկանալի է՝ գնացել ենք պարզից դաշտի դեպքերը: Հասկանալի է՝ գնացել ենք պարզից դեպքերը:

Ներկա ինքնուսույցի կառուցվածքը պարզ է: Այն բաղկացած է 34 թեմատիկ դասերից, որոնցից առաջին 9-ը կազմված են միայն բանավոր վարժություններից: Անկատի ենք ունեցել այն հանգանաքը, որ մարդը նախ խոսել է սովորում, ապա կարդալ ու գրել: X – XII դասերը նվիրված են գրուստուցմանը, մնացածները գիտելիքի խորացմանը և ամրակայմանը: Սկսած XIII դասից երկխոսությունները ծառայում են նաև որպես ընթերցանության նյութ: Ընթերցանության և գրավոր վարժությունների ներգրավումը օգնում է բանավոր ճանապարհով հաղորդված լեզվական նյութի և կառուցվածքի յուրացման ու ամրապնդմանը:

Յուրաքանչյուր դասն իր հերթին բաղկացած է 3 մասից: Առաջին մասում տրվում է լեզվաբերականական այն նյութը, որի ուսուցումը տվյալ դասի նպատակն է: Երկրորդ մասում, որը վերնագրել ենք «Զրուցարան», բերվում են այդ նյութն ընդգրկող կամ պարունակող երկխոսություններ, երրորդ մասում բանավոր և գրավոր վարժություններ: Վերջում կա գիտելիքների ստուգման 100-բալանոց մի հարցարան, որի միջոցով սովորողը, ընտրություն կատարելով գույց ձեռների միջև ծիծու և սխալ կարող է ինքնուրույն որոշել հայերենի իմացության իր նակարդակը լեզու սովորելու այս նախնական փուլում:

Օտար լեզվի դասագրքերը և ինքնուսույցները (չմոռանանք, որ այս դեպքում հայերենը ուսուցմանվում է որպես դաշտի դասի նպատակն է: Երկրորդ մասում, որը վերնագրել ենք «Զրուցարան», բերվում են այդ նյութն ընդգրկող կամ պարունակող երկխոսություններ, երրորդ մասում բանավոր և գրավոր վարժություններ: Վերջում կա գիտելիքների ստուգման 100-բալանոց մի հարցարան, որի միջոցով սովորողը, ընտրություն կատարելով գույց ձեռների միջև ծիծու և սխալ կարող է ինքնուրույն որոշել հայերենի իմացության իր նակարդակը լեզու սովորելու այս նախնական փուլում:

Օտար լեզվի դասագրքերը և ինքնուսույցները (չմոռանանք, որ այս դեպքում հայերենը ուսուցմանվում է որպես դաշտի դասի նպատակն է: Երկրորդ մասում, որը վերնագրել ենք «Զրուցարան», բերվում են այդ նյութն ընդգրկող կամ պարունակող երկխոսություններ, երրորդ մասում բանավոր և գրավոր վարժություններ: Վերջում կա գիտելիքների ստուգման 100-բալանոց մի հարցարան, որի միջոցով սովորողը, ընտրություն կատարելով գույց ձեռների միջև ծիծու և սխալ կարող է ինքնուրույն որոշել հայերենի իմացության իր նակարդակը լեզու սովորելու այս նախնական փուլում:

Այսպես, որ մեր ինքնուսույցը բնույթով նաև տեղեկատվական է: Բուն նյութից բացի՝ այն պարունակում է բազմաթիվ հարակից նյութերը:

սահմանադրությունից մինչև հայոց ժայռապատճերները, Հայկի և Բելի ավանդավեպից մինչև հայ նշանավոր արքեստագետների ու ազգային գործիչների կյանքի ու ստեղծագործությունների մասին հանրանատչելի գիտելիքները:

Ինքնուսույցին կցված են նաև երկլեզվյան բառարաններ հայերեն-անգլերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-ռուսերեն և այլն, բայց սովորողի գործը հեշտացնելու համար, որ անընդհատ «չվազի» բառարանի հետևից, հայերենի բոլոր տեքստերը բարգնանել ենք անգլերեն և ռուսերեն. բավական է սլաքը դնել ԱՄՆ-ի կամ ՌԴ-ի դրոշի վրա, և էկրանին անմիջապես հայտնվում է նույն տեքստի անգլերեն կամ ռուսերեն թարգմանությունը:

Թող մեր ասածը անհամեստություն չընկալվի, դրվատանքի շատ խոսքեր ենք լսել այս աշխատության ազգային ծեփ և մարդասիրական, հայրենասիրական բովանդակության, հումորի գեղարվեստական հնարքը վարպետորներ կիրառած լինելու, միջառարկայական կապերը հաշվի առնելու մասին, կարծիքներ, որոնք հնչել են ազգային ռադիոյով, արձանագրվել հանրապետական մամուլի էթերում: Իսկ ինչ դիդակտիկ տեսալսողական նյութերի հարստության է վերաբերում, դրա վառ ապացույցը ինքնուսույցում գետեղված 1000-ից ավելի նկարներն ու տեքստերի ձայնագրություններն են:

Այն էլ ասեմք, որ «Հայոց լեզվի ինքնուսույց» էլեկտրոնային դասագրքի հիմք համուխացող՝ տողերիս հեղինակի համանուն ձեռնարկը փորձարկվել է ԵրՊԻ-ի (այժմ ՀՊՃ) օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետում առհասարակ հայերեն չիմացող ուսանողների խմբերում, և տվել բավական դաշտագործական արդյունքներ: Նրանում կիրառված մեթոդը հետագյում ավելի է հղվել և կատարելագործվել:

Նորագույն տեխնոլոգիաներն, իրոք, հրաշքներ են գործում, և մեր ինքնուսույցի էլեկտրոնային տարբերակի հնարավորությունները, չենք վայխենում ասել, անսահմանափակ են: Նախ սովորողը կարող է համակարգչի վահանակի կոճակը սեղմելով իր ցանկացածի չափով լսել և կրկնել իր ուզած բառը, բառակապակցությունը, նախադասությունը, երկխոսությունը կամ այլ տեքստ, կարող է կրկին ու կրկին վերադառնալ նախորդ էջին կամ դասին, նորից աշխատել այդ նյութի վրա, իսկ եթե օգնության կարիք է գգում, կարող է կանչել «Մերողական ուղեցույցը»:

Համակարգչը լայն հնարավորություն է տալիս նաև գրավոր խոսքի ուսուցման համար: Սովորողը կարող է տպատառերով գրել բառեր, նախադասություններ և այլն, լրացնել բաց բողնված տառերը, բառերը, վերջավորությունները և այլն: Կարող է միայն ձայնը միացնելով գրել բառային կամ ուսուցողական, նաև ստուգողական թելադրություններ, ապա տեքստի հետ համեմատելով՝ ստուգել իր գրածը և գնահատել: Այստեղ ևս գործում է խաղի սկզբունքը. Եթե սովորողը գրավոր վարժությունը ճիշտ չի կատարում, առաջ գնալ չի կարող երրորդ անգամ մխալվելուց հետո համակարգիչը նշում է ճիշտ տարբերակը և թույլ տալիս առաջ շարժվել:

Ի տարբերություն իրապարակի վրա եղած հայերենի մյուս ինքնուսույցների՝ սա արդեն եղած որևէ ծրագրի թարգմանությունը կամ հայացումը չէ, այլ՝ մեր ստեղծածը, և շարունակական բնույթ ունի: Իսկ դա նշանակում է, որ այն կարող է հարստացվել նորանոր նյութերով, թեմաներով ու դասերով: Այսպես՝ նպատակ ունենք նույն տեքստոր թարգմանել նաև արևմտահայերեն, ֆրանսերեն, իտալերեն և իսպաներեն, իհարկե, համապատասխան ֆիննանսական միջոցների առկայության դեպքում:

Այս ինքնուսույցը, որը հասցեագրված է թե՝ մեծահասակներին, թե՝ փոքրահասակներին, լայն հեռանկարների է բացում նաև հեռահաղորդակցական ուսուցման համար, որը համակարգչի միջոցով կկապի աշխարհի տարբեր ծագերում ապրող հայերին իրար և Սայր Հայրենիքի հետ:

Ասենք և այն, որ ինքնուսույցի վրա աշխատանքը կատարվել է 1998-2003թթ. «Որոնում-Հայկնետ» իիմնադրամուն (այժմ «Հայկնետ» ուսումնագիտական հիմնադրամ) ՀՅ կոթության և գիտության նախարարության ֆինանսական աջակցությանք: 2003թ. հունիսին այն քննարկվել է նույն նախարարության Կոթական բարեփոխումների կենտրոնում, որի տնօրեն պրո Վիկտոր Մարտիրոսյանի ստորագրությամբ ստացել ենք այսպիսի գրություն. «Զեր հեղինակած «Հայոց լեզվի ինքնուսույց» էլեկտրոնային դասագրքը քննարկվել է ԿԲԿ մասնագիտական խմբերում: Ըստ մասնագետների՝ այն օգտակար կիմի բոլոր այն հայորիների համար, ովքեր կորցրել են կապը մայրենի լեզվի հետ և ցանկանում են հայերեն սովորել: Էլեկտրոնային դասագրքը ընդհանուր պատկերացում է տալիս Հայաստանի ու նրա ժողովրդի մասին և այդ առումով այն ուսուցիչների կողմից կարող է օգտագործվել նաև որպես տեղեկատվություն, բնագրային նյութի հետ աշխատելու միջոց»:

Մեր հեղինակած էլեկտրոնային ինքնուսույցի կիրառական հնարավորությունների մասին ասվածը թերի կիմի, եթե չնշենք, որ այն արդեն կիրառվում է ՀՅ մի շարք բուհերում և դպրոցներում Երևանի պետական բժշկական համալսարան, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևանի «Գլածոր» կառովարման համալսարան, Սոսկվայի սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ, եւ Չարենցի անվան դպրոց և այլն: ՀՅ կոթության և գիտության նախարարության կողմից ինքնուսույցի թեկության սահմանափակ քանակություն (20 օրոնք) ուղարկվել է Մոսկվայի և Զավախիքի հայկական դպրոցները: Գնալով մեծանում է մեր ինքնուսույցի տարածման աշխարհագրությունը՝ Ավստրալիայից մինչև Անգլիա, ԱՄՆ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից մինչև Իտալիա, Գերմանիա, Բելգիա, Հոլանդիա և այլն:

Մենք հեղինակներս, չենք կարծում, թե ներ կարծում, թե ստեղծել ենք անթերի մի գործ: Կան և վրիպակներ. դրանք նշված են ինքնուսույցում: Սիրով կը նդունեն շահեկան դիտողությունները, որոնք կնպաստեն աշխատանքի կատարելագործմանը: Կարենոր այն է, որ այս ուղղությամբ քայլ է կատարված, իսկ ապագան, անկասկած, բարձրագույն տեխնոլոգիաներին է պատկանում, որոնց կիրառական հնարավորությունները սահման չեն ճանաչում: